

**ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է ՀՀ կառավարությունում կայացած անտառների վերականգման և զարգացման հիմնադրամի 2016 թվականի ծրագրերի քննարկմանը**

18.03.2016

Վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել ՀՀ անտառների վերականգման և զարգացման հիմնադրամի (ԱՎԶՀ) հոգաբարձուների խորհրդի հերթական նիստը:

Համաձայն հաստատված օրակարգի՝ քննարկվել են ԱՎԶՀ-ի 2015 թ. գործունեության և ֆինանսատնտեսական հաշվետվությունները: Հիմնադրամի գործադիր տնօրեն Յուրի Չավադյանը ներկայացրել է հաշվետու տարում կատարված աշխատանքները՝ անտառների վերականգման և զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման, ինչպես նաև ֆինանսական միջոցների ստացման, տնօրինման և նպատակային օգտագործման ուղղությամբ: Հոգաբարձուների խորհուրդը հավանության է արժանացրել ներկայացված հաշվետվությունները: Մեկ այլ հարցով հաստատվել է նաև հիմնադրամի 2016 թ. հաստիքացուցակը և գործադիր մարմնի վարչակառավարչական ապարատի ծախսերի նախահաշիվը:

Հաջորդիվ Յուրի Չավադյանը հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներին է ներկայացրել ԱՎԶՀ-ի 2016 թ. իրականացվելիք ծրագրերը: Հիմնադրամի գործադիր տնօրենը նշել է, որ առաջիկայում նախատեսվում է, մասնավորապես, նախապատրաստական աշխատանքներ իրականացնել Սևանա լճին հարակից 10-ական հեկտար տարածքների անտառապատման ուղղությամբ: Բացի այդ, անտառտնկումների և ցանկապատման աշխատանքներ կիրականացվեն նաև Հրազդանի անտառտնտեսության 100 հա տարածքի վրա:

Նիստում քննարկվել են նաև անտառների պահպանությանը, վերականգմանը և նոր անտառների ստեղծմանը վերաբերող մի շարք հարցեր: Վարչապետը կարևորել է հանրապետությունում անտառների վերականգման ուղղությամբ շարունակական և հետևողական աշխատանքների իրականացումը:

Աղբյուրը՝ [www.gov.am](http://www.gov.am), 17.03.2016